

ԳԵՕՑ ՖՈՆ ԲԵՐԼԻՇԻՆ ԳՐՆ

ԵՐԿԱԹԱՋԵՌՆ

Գրեց՝ ԳԵՕԹԵ

ԹԵԳՄ. ՅԱՎՈՐ-ԳՐԻԳՈՐ

(Շար. տես Բազմավեպ 1932, էջ 553)

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ

Հասարակ - Պարտեզ մը

Երկու Նիւրնբերգի Վաճառականներ

Ա. Վաճառական. — Հոս կը կենանք, որովհետեւ կայսրը ասկից պիտի անցնի: Ահա երկար ճամբէն վեր հոս կու գայ:

Բ. Վաճ. — Քովը ո՞վ կայ:

Ա. Վաճ. — Աղբիւր ֆոն Ուայզլինգըն:

Բ. Վաճ. — Բամբերգի բարեկամը: Լաւ է:

Ա. Վաճ. — Ծուռկի կու գանք և ես կը խօսիմ:

Բ. Վաճ. — Լաւ. ահա կու գան:

Կայսր, Ուայզլինգըն

Ա. Վաճ. — Մոռա՛ կ'երեւայ:

Կայսր. — Յոգնած եմ, Ուայզլինգըն, և երբ անցած կեանքիս կը նայիմ, վհատիլս կու գայ. այնքան կիսկատար, այնքան անյաջող գործեր: Եւ այս ամէն բան անոր համար որ ոչ մէկ իշխան կայսրութեան մէջ այնքան փոքր է, որ իր ճառէն աւելի իմ մտածումներուս յարէր:

(Վաճառականները կայսեր ոտքը կ'իյնան)

Վաճ. — Ամենամեծափառ տէր, ամենահզօր տէր:

Կայսր. — Ո՞վ էք, ի՞նչ կայ:

Վաճ. — Նիւրնբերգի խեղճ վաճառականներ, Ձեր Վեհափառութեան ծառաները, և օգնութիւն կը խնդրեն: Գէօց ֆոն Բերլիշինգըն և Հանց ֆոն Սելբից մեզմէ երեսուն հոգիի վրայ յարձաւ կեցան, երբ Ֆրանկֆուրտի տօնավաճառէն կու գայինք բամբերգեան առաջնորդութեամբ՝ և կոչուպտեցին. կը խնդրենք Ձեր կայսերական Վեհափառութենէն օգնել, աջակցիլ, ապա թէ ոչ կործանած ենք՝ ստիպուած ըլլալով հացերնիս մուրալու:

Կայսր. — Սուրբ Աստուած, սուրբ Աստուած. ի՞նչ է այս: Մէկը՝ միայն մէկ ձեռք ունի, միւսը՝

միայն մէկ սրունք: Եթէ երկու ձեռք և երկու սրունք ունենային, ի՞նչ պիտի ընէինք այն ատեն:

Վաճ. — Ամենախոնարհ կերպով կը խնդրենք Ձեր Վեհափառութենէն՝ գթացող աչք մը նետելու մեր ցաւալի կացութեան վրայ:

Կայսր. — Ի՞նչպէս կ'ըլլայ: Եթէ վաճառական մը տոպրակ մը պղպղղ կորսնցնէ պէտք է ամբողջ կայսրութիւնը ոտքի հանել. և երբ կռիւ մը պատահի թագաւորութեան, իշխանապետութեան, դքսութեան և ուրիշներու դէմ որ Նորին կայսերական Վեհափառութիւնը և կայսրութիւնը կը հետաքրքրէ՝ այն ատեն ոչ ոք կրնայ ձեզ միացնել:

Ուայզ. — Անյարմար ժամանակի կու գաք: Գացէ՛ք քիչ մը ատեն:

Վաճ. — Ձեր Վեհափառութեան կ'ապաւի-նինք: (Դուրս)

Կայսր. — Գարձեալ նոր կռիւներ: Ջրօծի մը գլուխներուն պէս կը շատնան անոնք:

Ուայզ. — Եւ չեն բնաջնջուիր, եթէ ոչ միայն կրակով ու սուրով:

Կայսր. — Կը կարծէ՞ք:

Ուայզ. — Ամենադիւրին բան կը նկատեմ զայդ եթէ Ձեր Վեհափառութիւնը և իշխանութիւնը ուրիշ անկարելի գծաւորութեան մասին հաճախին: Ի գուր չէ որ բովանդակ Գերմանիա կը տրտնջէ անկարգութեանց մասին: Ֆրանկէն և Շուարըն դեռ կը կայծկւտան ներքին, կործանա-րար քաղաքացիական պատերազմի հետեանք-ներէն: Եւ դեռ կան շատեր՝ ազնուականներէն և ասպետներէն, որոնք խաղաղութիւն կ'ուզեն: Եթէ անգամ մը մէկ կողմ նետէինք այդ Սիքիւնգընը, Սելբիցը, Բերլիշինգընը, ֆառացածը ինքնիքն պիտի իյնար. որովհետեւ անոնց շունչն է որ յեղափոխական ամբոխը կ'ոգեւորէ:

Կայսր. — Սիրով պիտի ուզէի այդ մարդոց գթալ. քաջ են և ազնիւ: Եթէ պատերազմ ընեմ, պէտք է որ ինծի հետ միայն կուրին:

Ուայզ. — Փափաքելի պիտի ըլլար որ սկիզբէն սորվէին իրենց պարտականութիւններուն խոնարհելու: Բայց շատ վտանգաւոր պիտի ըլլար իրենց յեղափոխական գործերը պատուի կարգերով վարձատրելը: Որովհետեւ միշտ կայ սերական այս գթութեամբ ու շնորհքով է որ

Բանակաւ կայսերական մահապատժի

Զօրապետ, Սպաներ

Զօրապետ. — Պէտք է զգուշութեամբ երթանք և կարելի եղածին չափ շատ խնայենք մեր մարդիկը: Նաեւ կտրուկ հրաման ստացած ենք զինքը նեղելու և ողջ գերի բռնելու: Դժուար պիտի ըլլայ... մի վէ որ պիտի մօտենայ անոր:

Ասպիկ սպայ. — Անշուշտ: Եւ ան ինքզինքը պիտի պաշտպանէ վարազի մը պէս: Բայց իսկապէս նա իր ամբողջ կեանքին մէջ մեզի նեղու-թիւն մը չտուաւ, և ամէն ոք պիտի մերժէ կայսեր եւ կայսրութեան սիրոյն բազուկ ու սրունք վրայ տալու:

Երկրորդ սպայ. — Ամօթ պիտի ըլլար եթէ չբռնէինք զինքը: Եթէ անգամ մը զինքը քուրջէն բռնեմ՝ պիտի չկրնայ փախչիլ:

Ա. սպայ. — Միայն թէ ակռաներով չբռնէք, կրնայ ձեր ծնօտը տեղէն հանել: Սիրելի պարոնիկս, այդպիսի անձեր դիրքաւ չեն բռնուիր ինչպէս փախչող գող մը:

Բ. սպայ. — Պիտի տեսնենք:

Զօրապետ. — Հիմա մեր նամակն առած ըլլալու է: Պէտք չէ դանդաղիւք խուսէք մը դրեւ-լու որ հետապնդէ զինքը:

Բ. սպայ. — Թողէ՛ք որ ես առաջնորդեմ զանի:

Զօրապետ. — Անտեղեակ էք դիրքերուն:

Բ. սպայ. — Ձիւնուր մը ունիմ որ հոս ծնած և հոս մեծցած է:

Զօրապետ. — Թող ըլլայ: (Կը մեկնին)

Եւքստհաուզըն

Սիքիւնգըն

Սիքիւնգ. — Ամէն բան բաղձացուածին պէս կ'երթայ. քիչ մը շփոթած էր առաջարկիս վրայ և դիտեց զիս զլխէս մինչեւ ոտքերս. գրաւ կը բռնեմ, որ զիս բաղձատեց իր անհատարիմին հետ: Փառք Աստուծոյ որ կրնամ կենալ: Քիչ և շփոթ պատասխան տուաւ: Աւելի լաւ: Ատեն մը թող անցնի: Աղջիկներու մօտ, որոնք սիրոյ դժբախտութենէ եփած են՝ ամուսնութեան առաջարկը շուտով կ'եփի:

Գեօց կու գայ

Սիքիւնգ. — Ի՞նչ կը բերէք, քեռայր:

Գեօց. — Աքսորի սուրհանդակ:

Սիքիւնգ. — Ի՞նչ:

Գեօց. — Ահա կարդացէ՛ք սա շինիչ նամակը: Կայսրը ինծի դէմ մահապատիժ հրամայած է, իմ մարմինս կուր նետելու երկնքի թռչուններուն և երկրիս անասուններուն:

Սիքիւնգ. — Թող մէյմը մօտենան... ճիշդ յարմար ժամանակին եկած եմ:

Գեօց. — Ո՛հ, Սիքիւնգըն, պէտք է մեկնիք: Ձեր մեծ ծրագիրները կրնան կործանիլ, երբ այսպիսի

մինչեւ հիմա այսպէս անիմանալի կերպով զեղծան, և իրենց հետեւորդները, որոնք իրենց վստահութիւնն ու յոյսը ատոր վրայ կը դնեն, կարելի պիտի չըլլայ ուրիշ կերպով զսպել, բայց եթէ զանոնք աշխարհէս բոլորովին վերցնելով և արմատախիլ ընելով անգամ մ'ալ գլուխ վեր-ցրնելու բոլոր յոյսերնին:

Կայսր. — Ուրեմն խտուրթիւն կը թելադրէք:

Ուայզ. — Ուրիշ միջոց չեմ տեսներ զսպելու համար խարդախ ոգին որ արդէն գաւառներ բռնած է: Արդէն հոս հոն չենք իմանար դառն տրտունջները ազնուականներուն, թէ իրենց հալա-տակները, ստրուկները իրենց դէմ կ'ելլեն ու կը սպառնան հինէն եկած իշխանութիւնը սաստ-կացնելու, այնպէս որ ամենավտանգաւոր հե-տեւանքներ կարելի է սպասել:

Կայսր. — Հիմա լաւ առիթ մը պիտի ըլլար Բերլիշինգընի և Սելբիցի դէմ, բայց չեմ ուզեր որ անոնց ֆրաս մը պատահի: Զերբակալուած կ'ուզէի զիրենք. ու յետոյ պէտք են երգում ընել որ իրենց դղեակներուն մէջ հանգարտ պիտի կենան և իրենց սահմանէն դուրս չելլեն: Յա-ջորդ նիստին մէջ կ'ուզեմ այս բանն առաջար-կել:

Ուայզ. — Ուրախ, ձայնակցող կոչ մը պիտի խնայէ Ձեր Վեհափառութեան ճառը վերջացնե-լու: (Կը մեկնին)

Եւքստհաուզըն

Սիքիւնգըն, Բերլիշինգըն

Սիքիւնգըն. — Այո՛, կու գամ խնդրելու հա-մար ձեր ազնիւ քրոջ սիրտն ու ձեռքը:

Գեօց. — Երանի թէ աւելի առաջ գայիք: Պէտք է ըսեմ ձեզի որ Ուայզլինգըն իր բան-տարկութեան ժամանակ ներս սէրը շահեցաւ, զանի խնդրեց, և ես շնորհեցի: Ես ազատ արձա-կեցի թռչունը, և ան կ'արհամարհէ բարի ձեռքը, որ իրեն նեղութեան մէջ ուտելիք տուաւ: Չորս կողմ կը թրթռայ, Աստուած գիտէ թէ որ մա-ցառին վրայ սնունդը փնտռելու համար:

Սիքիւնգ. — Ա՜յդպէս է:

Գեօց. — Ինչպէս որ կ'ըսեմ:

Սիքիւնգ. — Կրկին կապեր խզեց ան: Երանի՛ ձեզի, որ մատնիչին հետ չխնամացաք:

Գեօց. — Նէ հոն է, խեղճ աղջիկը. կեանքը հեծելով ու աղօթելով կ'անցընէ:

Սիքիւնգ. — Երգել կու տանք նէրա:

Գեօց. — Ի՞նչպէս, կ'որոշէք լքում մը առ-նելու:

Սիքիւնգ. — Ձեր երկուքին համար ալ պատիւ մըն է անոր կողմէ խաբուած ըլլալը: Պէտք է խեղճ աղջիկը վաճառ մտնէ, որ որովհետեւ իր ճանչցած առաջին այդ մարդը անարժան մըն էր: Ո՛հ, կը պնդեմ, որ նէ մեր դղեակներուն թագուհին պէտք է ըլլայ:

Գեօց. — Կ'ըսեմ ձեզի թէ նէ անտարբեր չէր անոր հանդէպ:

Սիքիւնգ. — Չէ՞ս կրնար վստահ ըլլալ վրաս թէ պիտի կրնամ թշուառականի մը ստուերը փախցնել: Երթանք նէրան: (Կը մեկնին)

անյարմար ժամանակ կայսրութեան թշնամին ըլլաք: Ինծի շատ աւելի պիտի կարենաք օգնել, եթէ չէ՞գոք կենալ թուիք: Կայսրը կը սիրէ ձեզ, և ինծի հանդիպելիք չարագոյն աղէտը՝ գերի բռնուիլն է. այն ատեն կը գործածէք ձեր բաւելիսութիւնը, ու զիս դուրս կը հանեն դժբախտութենէ մը, ուր անժամանակ օգնութիւն մը երկուքս ալ կրնար գլտորել: Որովհետեւ, ինչ պիտի ըլլար: Ներկայիս արշաւանքը ինծի դէմ է. եթէ իմանան որ մօտս ես, այն ատեն աւելի զինուոր կը դրկեն, հետեւաբար աւելի լաւ չենք ըլլար: Կայսրը ակին մօտ նստած է, և ես անդարմանելի կերպով կորսուած կ'ըլլայի, եթէ կարելի ըլլար քաջասրտութիւնը փչել, ինչպէս գունդ մը որ փողը կը փչէ:

Սիրիկեզ. — Բայց զաղտ կրնար քսան նիզաւաւոր դրկել ձեզի:

Գեօգ. — Լաւ: Արդէն Գեորգը Սելբիցին դըրկեցի և զինուորներս ալ իմ շրջակաս գտնուողնէ լուռ: Սիրիկեզ քեռայր, երբ իմ մարդիկս միանան, այն ատեն այնպիսի գունդ մը կը կազմուի՝ որուն նմանը շատ քիչ իշխաններ տեսած են:

Սիրիկեզ. — Բազմութեան դէմ քիչ պիտի ըլլաք:

Գեօգ. — Գայլ մը շատ է ամբողջ ոչխարի հօտի մը:

Սիրիկեզ. — Եթէ սակայն լաւ հովիւ մը ունին:

Գեօգ. — Գու պիտի տեսնես: Բոլորն ալ վարձկաններ են: Ու յետոյ լաւագոյն ասպետն ալ ոչինչ կրնայ ընել թէ որ իր գործերուն տէրը չէ: Ատեն մըն ալ այսպէս եկած էին ինծի դէմ, երբ Ֆալցի դուքսին խոստացած էի՝ Կոնրադ Դոտտի դէմ ծառայելու: Կա այն ատեն զիւանդն թուղթ մը հանեց ինծի, թէ ինչպէս ձիարշաւելու և ինչ ընելու եմ. ես զայն խորհրդակցանքներուն վերադարձուցի և ըսի թէ չեմ կրնար այդ կարգադրութիւններուն համեմատ գործել. պատահեւ լիքը չէի գիտեր, և թէ ատիկա չէր գրուած թուղթին վրայ. ուստի աչքերս ես իսկ պէտք էի բանալ և տեսնել թէ ինչ ունիմ ընելիք:

Սիրիկեզ. — Բարեբախտութիւն կը մաղթեմ, եղբայր: Իսկոյն կը մեկնիմ և կը դրկեմ զանոնք՝ որ շուտով կրնամ պատրաստել:

Գեօգ. — Կիներուն ալ հանդիպէ, ես զիրենք միասին թողի: Կ'ուզէի որ ներա խօսքը ունենայիր մեկնելէդ առաջ: Յետոյ դրկէ ինծի նիւզակաւորները եւ զաղտնորէն եկուր դարձեալ Մարին առնելու, որովհետեւ կը վախճամ որ զղեակս քիչ ատենէն այլեւս կ'իններու կենալիք տեղ պիտի չըլլայ:

Սիրիկեզ. — Բարին յուսանք: (Կը մեկնին)

Բամբերգ

Աբբէճայրի սենեակը

Ադրիանոյ, Ֆրանց

Ադրիանոյ. — Ուրեմն երկու արշաւախումբերն ալ ճամբայ ելած են:

Ֆրանց. — Այո, և տէրս ուրախ է ձեր թշնա-

միներուն դէմ երթալու: Իսկոյն միասին երթալ կ'ուզէի, ինչպէս որ այնքան սիրով ձեզի կու գամ: Հիմա դարձեալ կը մեկնիմ շուտով, ուրախ լուրով մը վերադառնալու համար: Տէրս արտօնեց ինծի զայդ:

Ադրի. — Ինք ինչպէս է:

Ֆրանց. — Լաւ է: Պատուիրեց որ ձեռքերնիդ համբուրեմ:

Ադրի. — Ահա: Երթունքներդ տաք են:

Ֆրանց (ինքնիրեն; կուրճը ցոյց տալով). — Հոս աւելի տաք է: (Բարձր) Յարգելի տիկին, ձեր ծառաները արեւին տակ եղած ամէնէն երջանիկ մարդերն են:

Ադրի. — Ո՞վ է Բերլինգընի դէմ կոռուղներուն զուլը:

Ֆրանց. — Սիրաուն: Մնաք բարով, բարի տիկին, պէտք է նորէն մեկնիմ: Զիս մի մոռնաք:

Ադրի. — Պէտք է բան մը ուտես, խմես և հանգչիս:

Ֆրանց. — Ինչ պէտք կայ: Զեզ տեսայ ահա: Այլեւս ոչ յոգնած եմ՝ ոչ ալ անօթի:

Ադրի. — Կը ճանչնամ հաւատարմութիւնդ:

Ֆրանց. — Այ, յարգելի տիկին:

Ադրի. — Զես կրնար դիմանալ. հանդարտէ և բան մը կեր:

Ֆրանց. — Ո՛հ, ինչ խնամք խեղճ երկտասարդի մը համար: (Կը մեկնի)

Ադրի. — Աչքերուն մէջ արցունք կայ: Սրտանց կը սիրեմ զինքը: Այսքան անկեղծ և տաք սէր դեռ ոչ ոք ունեցած է ինծի համար: (Կը մեկնի)

Նաբստահուզըն

Գեօգ, Գեորգ

Գեորգ. — Կ'ուզէ ինքն իսկ ձեզի հետ խօսիլ: Ես չեմ ճանչնար զինքը. մեծ մարդ մըն է՝ սեւ, կրակոտ աչքերով:

Գեօգ. — Ներս բեր զինքը:

Լերսէ կու գայ

Գեօգ. — Ո՞ղջ ըլլաք: Ինչ կը բերէք:

Լերսէ. — Ինքզինքս. շատ չէ, բայց ինչ որ է ամբողջապէս զայն ձեզի կը նուիրեմ:

Գեօգ. — Բարի եկաք, կրկնապէս բարի, քաջ մարդ մ'էք, և այն ժամանակ որ չէի յուսար նոր բարեկամներ վաստակիլ, աւելի հիններու կուրուստին վախն ունէի: Անուննիդ տուէք:

Լերսէ. — Ֆրանց Լերսէ:

Գեօգ. — Դնորհակալ եմ ձեզի, Ֆրանց, որ զիս քաջ մարդու մը հետ ծանօթացուցիք:

Լերսէ. Արդէն անգամ մը ճանչցուցած էի ձեզի ինքզինքս, բայց այն ատեն չնորհակալ չեղաք ինծի:

Գեօգ. Զեմ յիշեր ձեզ:

Լերսէ. — Կը ցաւիմ: Գիտէք դեռ թէ Ֆալցի դուքսին սիրոյն Կոնրադ Դոտտի դէմ թշնամի եղաք, և Աղուհացին Հացֆուրտ կ'ուզէիք երթալ:

Գեօգ. — Հարկաւ թէ կը յիշեմ:

Լերսէ. — Կը յիշեք թէ ճամբան ինչպէս քսանըհինգ ձիաւորներու հանդիպեցաք:

Գեօգ. — Ճիշդ: Սկիզբը միայն տասներկու հոգի կարծեցի և բաժնեցի խումբս, մենք տասնըվեց էինք, և զիւղին մօտ՝ ցորեննոցի ետին, կարծելով որ իմ առջեւէս պիտի անցնին երթան: Յետոյ կ'ուզէի անոնց ետին իյնալ, ինչպէս որ միւս խումբին հետ համաձայնած էի:

Լերսէ. — Բայց մենք ձեզ տեսանք և զիւղին մօտ բլուր մը ելանք: Դուք անցաք և վար կեցաք: Երբ տեսանք որ վեր գալ չէք ուզեր, մենք վար ձիարշաւեցինք:

Գեօգ. — Միայն այն ատեն տեսայ որ վտանգաւոր դրութեան մէջ էի: Քսանըհինգ՝ ութի դէմ: Պարապ կենալու ատեն չէր: Երհարդ պայտարը նիզակեց զինուորներէս մին, ատոր փոխարէն ձիէն վար գլտորեցի զինքը: Եթէ ամէնքն ալ իրեն պէս և ուրիշ զինուորի մը նման ըլլային՝ վատ պիտի ըլլար իմ և պզտիկ խումբիս վիճակը:

Լերսէ. — Զինուորը, որու մասին կը խօսիք...

Գեօգ. — Ամենաքաջն էր զոր տեսայ: Շատ նեղեց գիտ: Երբ կը մտածէի, ազատել օձիքս իրմէ՝ միւսերուն հետ կոռուելու համար, ահա դարձեալ մօտս էր և անգթօրէն կը զարնէր: Զրահիս թեզանիքին մէջէն ալ այնպէս զարկաւ որ քիչ մը մարմնոյս դաւաւ:

Լերսէ. — Ատիկա ներեցիք իրեն:

Գեօգ. — Զափէն աւելի հաւնեցայ իրեն:

Լերսէ. — Այն ատեն յուսամ թէ ինծմէ գոհ պիտի մնաք. փորձս ձեր իսկ մօտ ըրի:

Գեօգ. — Դո՛ւն ես ատիկա: Ո՛հ, բարի եկար: Կրնամս ըսել, Մաքսիմիլիանոս, որ ծառաներուդ մէջ այսպիսի մէկը վաստակեցար:

Լերսէ. — Կը զարմանամ որ ամենեւին զիս յիշած չէք:

Գեօգ. — Ինչպէս կրնայի միտքս բերել թէ ան որ կատաղի կերպով զիս տապալել կ'ուզէր՝ օր մը ինծի ծառայութիւններ պիտի մատուցանէր:

Լերսէ. — Ճիշդ ատիկա, տէր: Պզտիկութեանէս ի վեր կը ծառայեմ-որպէս նիզակաւոր զինուոր և շատ մը ասպետներու հետ չափուած եմ: Երբ ձեզ հետ բռնուեցանք՝ կ'ուրախանայի: Ես ծանօթ էի ձեր անուան, և այն պարագային ձեզ ճանչցայ: Գիտէք որ չտոկացի. տեսաք թէ վախի համար չէի, որովհետեւ դարձեալ եկայ: Շուտով, ձեզ ճանչցայ, և այդ ժամէն սկսեալ որոշեցի ձեզի ծառայել:

Գեօգ. — Ո՞րքան ատեն կ'ուզէք մօտս մնալ:

Լերսէ. — Մէկ տարի: Առանց վարձքի:

Գեօգ. — Ոչ, դուք ալ պէտք է ամսական ստանաք ինչպէս ամէնքը, մանաւանդ մէկը՝ որ Ռեմլինի մօտ նեղեց զիս:

Գեորգ կու գայ

Գեորգ. — Հանց ֆոն Սելբից կը բարեւէ ձեզ: Վաղը հոս է՝ յիսուն մարդով:

Գեօգ. — Լաւ:

Գեորգ. — Կոխըրի մօտ խումբ մը կայսեւրական զինուոր կ'անցնի, անկասկած՝ ձեզ դիտելու:

Գեօգ. — Ո՞րքան:

Գեորգ. — Յիսուն հատի չափ:

Գեօգ. — Ո՛չ աւելի: Եկուր, Լերսէ, տակնուվրայ ընենք զիրենք. երբ Սելբից գայ լմնցած աշխատութիւն մը թող գտնէ:

Լերսէ. — Ճոխ երախայրիք մը պիտի ըլլայ:

Գեօգ. — Զի նստէք: (Կը մեկնին)

Անտառ՝ Ճախճախուտի մը մօտ

Երկու կայսերական զինուորներ կը հանդիպին երարու:

Առաջին զինուոր. — Ինչ կ'ընես հոս:

Երկրորդ զինուոր. — Թոյլտուութիւն խընդրեցի՝ բնական պէտքս հոգալու համար: Երէկ իրիկուան տարապարտ աղմուկէն ի վեր աղիքներս տեղէն խախտած են, այնպէս որ ամէն վայրկեան պէտք է ձիէն իջնեմ:

Ա. զինուոր. — Խումբը հոս մօտերը կը կենայ:

Բ. զինուոր. — Ժամ մը հեռու, վերն են ան տառին մէջ:

Ա. զինուոր. — Այն ատեն ինչպէս մինչեւ հոս հեռացեր ես:

Բ. զինուոր. — Կը խնդրեմ, մի մատներ զիս: Կ'ուզեմ մօտակայ գիւղը երթալ և տեսնել թէ չեմ կրնար արդեօք տաք ծածկոյթներով ցաւիս դարման մ'ընել: Իսկ դուն ուսկից կու գաս:

Ա. զինուոր. — Մօտակայ գիւղէն: Մեր սպային համար գինի և հաց առի:

Բ. զինուոր. — Այդպէս. մեր աչքին առջեւ վար կը թխէ, և մենք պէտք է ծոմ պահենք: Գեղեցիկ օրինակ:

Ա. զինուոր. — Հետո ետ եկուր, ստահակ:

Բ. զինուոր. — Եթէ յիմար մը ըլլայի: Դեռ շատեր կան խումբին մէջ որոնք սիրով պիտի ծոմ պահէին՝ եթէ ատկէ այնքան հեռու ըլլային ինծի պէս:

Ա. զինուոր. — Կը լսեմ: Զիեր:

Բ. զինուոր. — Վայ մեզի:

Ա. զինուոր. — Ես ծառին վրայ կը մագլցիմ:

Բ. զինուոր. — Ես ալ եղեգնուտին մէջ կը թաղուիմ:

Գեօգ, Լերսէ, Գեորգ, Զինուորներ՝ ձիու վրայ

Գեօգ. — Հեռանաք այս ճահիճէն դէպ ի ձախ. այսպէս իրենց ետեւէն կը բռնենք:

(Կ'անցնին)

Ա. զինուոր (Կ'եջնէ ծառէն). — Հոս լաւ չէ: Միքայէլ: Զի՞ պատասխաներ: Միքայէլ, մեկ-նեցան: (Գէպի ճահիճը կ'երթայ): Միքայէլ, ո՛հ, աւաղ, ընկղմած է: Միքայէլ: Զի լսեր զիս, խեղդուած է: Ստակած է, ճագար: Պարտուած ենք: Թշնամիներ, ամէն տեղ թշնա միներ:

(Շարունակելի)